

ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

6-րդ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 3-րդ ՆԱՏԱՇՐՁԱՆ

2-րդ ՁԵԿՈՒՅՑ



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

6-րդ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 3-րդ ՆՍՏԱՇՐՋԱՆ
2-րդ ՁԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 19730: Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

ՆԱԽԱԲԱՆ

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 6-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Դիտարկման առանցքում եղել է կառավարման խորհրդարանական համակարգում Ազգային ժողովի նոր լիազորությունների, օրենսդրական և վերահսկողական գործառույթների իրացման արդյունավետությունը: Ամփոփվել են խորհրդարանի գործունեության միտումներն ու ցուցանիշները, ԱԺ խմբակցությունների նախաձեռնողականության, ակտիվության տվյալները:

ԱԺ 6-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ-ն Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ընտրել է ՀՀ նախագահ, նոր լիազորություններով օժտված վարչապետ, Սահմանադրության ուժով ստեղծվող դատական իշխանության բարձրագույն մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի 10 անդամներից 5-ին:

Այս գործընթացն ուղեկցվել է հանրային-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով, որոնք կտրուկ փոխել են իրավիճակը երկրում և փաստացի հանգեցրել պառլամենտարիզմի պատմության մեջ նախադեպը չունեցող իրավիճակների:

Անդրադարձ է կատարվել պետական իշխանության մարմինների ընտրությունների պրակտիկային, պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացի իրավական խնդիրներին:

ՑԱՆԿ

ԱԺ գործունեությունը՝ թվերով	4
ԱԺ խմբակցություններ. նախաձեռնողականություն, ակտիվություն	9
ԱԺ օրենսդրական գործունեությունը	11
▪ Օրինաստեղծ գործունեության միտումները	12
▪ Օրինաստեղծ գործունեության առանձնահատկությունները	15
ԱԺ վերահսկողական գործառույթի իրացման արդյունավետությունը	20
▪ Պետական իշխանության մարմինների ընտրությունների պրակտիկան	20
Իրավական հակասությունների խնդիրը պատգամավորների անձեռնմխելիությունից զրկելու գործընթացում	29

ԱԺ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

Նստաշրջանը՝ թվերով

6-րդ գումարման Ազգային ժողովը 3-րդ նստաշրջանի ընթացքում գումարել է 8 հերթական, 7 արտահերթ և 4 հատուկ նիստ: Հրավիրվել է նաև 1 արտահերթ նստաշրջան՝ հուլիսի 11-ին: Բոլոր արտահերթերը հրավիրվել են կառավարության նախաձեռնությամբ:


3-րդ նստաշրջանում խորհրդարանն ընդունել է 314 օրենք: Դրանցից 24-ը «մայր» օրենքներ են, 290-ը՝ լրացում-փոփոխություններ արդեն գործող օրենքներում: Ազգային ժողովն ընդունել է նաև 9 օրենք-համաձայնագիր:

Ընդունված օրենքների քանակ

2-րդ նստաշրջան. 252 օրենք, որից մայր օրենք 15, միջազգային պայմանագիր 38

3-րդ նստաշրջան 323 օրենք, որից մայր օրենք 24, միջազգային պայմանագիր 9

- մայր օրենք
- պայմանագիր
- փոփոխություն



Ընդունված 323 օրենքներից 295-ի կամ շուրջ 90%-ի հեղինակը կառավարությունն է, 28-ինը՝ ԱԺ պատգամավորները: Ընդունված օրենքների գերակշիռ մասը վերաբերել է պետաիրավական ոլորտին:

Օրենքների հեղինակման ԱԺ-կառավարություն հարաբերակցություն

- 2-րդ. նստաշրջան.կառավարություն՝ 227 օրենք, պատգամավորներ 25
- 3-րդ. նստաշրջան.կառավարություն՝ 295 օրենք, պատգամավորներ 28



3-րդ. նստաշրջանում Ազգային ժողովն ընտրել է ԶԶ Նախագահ, ԶԶ վարչապետ, Բարձրագույն դատական խորհրդի անդամներ, ՍԴ անդամ և Նախագահ:

Խորհրդարանը հավանություն է տվել կառավարության ծրագրին, ի գիտություն է ընդունել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ԶԶ դատախազության, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի, Զեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017թ. հաղորդումները, Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունը:


Թվերի հետևում

- 3-րդ. նստաշրջանի ընթացքում խորհրդարանն առաջին անգամ կիրառել է հանրապետության նախագահ և վարչապետ ընտրելու՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքը:
- Խորհրդարանում անցկացվել է վարչապետի 3 ընտրություն: Առաջինը՝ Սերժ Սարգսյանի ընտրությունը (17.04.2018թ.), ուղեկցվել է Մերժիր Մերժին բողոքի շարժմամբ: Երկրորդ ընտրությամբ (01.05.2018թ.) խորհրդարանական փոքրամասնության թեկնածուն՝ Նիկոլ Փաշինյանը, չի ընտրվել: Երրորդ անգամ (08.05.2018թ.) ձայների 59 կողմ, 42 դեմ հարաբերակցությամբ Փաշինյանն ընտրվել է վարչապետ:


- Աջակցելով Նիկոլ Փաշինյանի առաջնորդած համաժողովրդական շարժմանը՝ ՀՀԴ-ն հայտարարել է ՀՀԿ-ի հետ 2017-ի մայիսին կազմած կոալիցիայից դուրս գալու մասին:
- Խորհրդարանի պատմության մեջ առաջին անգամ ՀՀԿ-ն հայտարարել է ընդդիմություն դառնալու մասին՝ արձանագրելով անսախադեպ իրավիճակ, երբ ընդդիմադիր է խորհրդարանական ամենամեծ խմբակցությունը:
- 8 պատգամավորի՝ խմբակցությունից դուրս գալուց հետո ՀՀԿ-ն դադարել է խորհրդարանում լինել բացարձակ մեծամասնություն: Գումարման սկզբում 58 պատգամավոր ունեցող խմբակցությունը 3-րդ նստաշրջանի ավարտին ուներ 50 պատգամավոր:
- 10 պատգամավորի լիազորություն նստաշրջանի ընթացքում դադարեցվել է. «Ելք»-ից 4 պատգամավոր տեղափոխվել է կառավարություն, ՀՀԿ-ից 1-ը՝ Սահմանադրական դատարան, մյուսները հրաժարվել են պատգամավորական մանդատից:
- ՀՀԿ խմբակցության պատգամավոր Մանվել Գրիգորյանը զրկվել է պատգամավորական անձեռնմխելիությունից: Խորհրդարանը բավարարել է նրան ազատությունից զրկելու և որպես մեղադրյալ քրեական գործում ներգրավելու՝ գլխավոր դատախազի միջնորդությունը:
- 6-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է 314 օրենք. սա շուրջ 3 անգամ ավելի է 5-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ցուցանիշից: Օրենքների կեսից ավելին ընդունվել է մինչև թավշյա հեղափոխությունը:

Ընդունված օրենքների քանակ

- 6-րդ գումարում, 3-րդ նստաշրջան՝ **314** օրենք
- 6-րդ գումարում, 2-րդ նստաշրջան՝ **214** օրենք
- 5-րդ գումարում, 2-րդ նստաշրջան՝ **94** օրենք



- 6-րդ գումարման 3-րդ ստաշրջանում չի փոխվել օրենսդրական նախաձեռնությունների կառավարություն-ԱԺ հարաբերակցությունը. ընդունված օրենքների 90%-ը հեղինակել է կառավարությունը:
- Փոխվել է արտահերթ նիստ-ստաշրջանների ընթացքում ընդունված օրինագծերի թիվը: Գրեթե յուրաքանչյուր երկրորդ օրենք 5-րդ գումարման ԱԺ-ն ընդունել է արտահերթ ստաշրջանում կամ նիստում, հրավիրողի սահմանած՝ քննարկումների գերարագ ռեժիմով: 6-րդ գումարման խորհրդարանի առաջին 3 ստաշրջաններում արտահերթերի ընթացքում ընդունվել է օրենքների հազիվ 1/3-ը:
- 3-րդ ստաշրջանում պատգամավորները հեղինակել են 49 օրինագիծ: Ընդունվել է դրանցից 19-ը: Նախորդ ստաշրջանում պատգամավորների հեղինակած 49 օրինագծից ընդունվել էր 6-ը:
- Զննարկվել և քվեարկությամբ մերժվել է միայն մեկ նախագիծ՝ «Ելք» խմբակցությունն առաջարկում էր ընդունել հայտարարություն 2008թ. մարտի 1-2-ի իրադարձությունների վերաբերյալ:
- «Ելք»-ը միակ խմբակցությունն է, որը ստաշրջանի ընթացքում կառավարությանը հարցապնդում է ներկայացրել: Այն վերաբերել է Էլեկտրաէներգիայի ու գազի սակագներին, սպառման ծավալներին ու կորուստներին:
- Ամենաշատ կողմ քվեարկած խմբակցությունը ՀՀԿ-ն է, ամենաշատ դեմ քվեարկածը «Ելք»-ը: Ամենաշատը ձեռնպահ է քվեարկել «Ծառուկյան» խմբակցությունը: Վերջինը նաև ստաշրջանի ամենակտիվ խմբակցությունն է (նախորդում ամենակտիվը «Ելք»-ն էր):
- «Ծառուկյան» խմբակցության պատգամավորներից յուրաքանչյուրը միջինը հնչեցրել է 6 հարց ու ելույթ: «Ելք»-ի նույն ցուցանիշը 5 է, ՀՀԿ-ական պատգամավորներինը՝ 3, ՀՀԴ-ինը՝ 2:



¹Տվյալը ակտիվության միջինացված ցուցանիշն է՝ ըստ խմբակցության պատգամավորների ընդհանուր թվի և հնչեցրած հարցերի ու պատասխանների ընդհանուր քանակի հարաբերակցության:

- 6-րդ գումարման ԱԺ-ում պահպանվում է «լուռ» պատգամավորների թիվը: 105 պատգամավորից 41-ը 3 ստաշրջանում քննարկման չի մասնակցել և միայն քվեարկել է (14-ը՝ «Ճառուկյան» խմբակցությունից, 27-ը՝ ՀՀԿ-ից):
- 6-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ ստաշրջանում եթիկայի հանձնաժողովի ձևավորման որևէ առաջարկ չի ներկայացվել: Նախորդ ստաշրջանում քննարկված և հետաձգված միակ առաջարկը՝ Արտաշես Գեղամյան-Նիկոլ Փաշինյան միջադեպը քննելու համար հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, 3-րդ ստաշրջանի օրակարգ չի ընդգրկվել:
- Ազգային ժողովի 6-րդ գումարման 3 ստաշրջանում անցկացվել է 7 խորհրդարանական լսում: Լսումներ է կազմակերպել 9 հանձնաժողովից 5-ը: Արտաքին հարաբերությունների, պետաիրավական, պաշտպանության և ֆինանսավարկային հարցերի մշտական հանձնաժողովները ստաշրջանի ընթացքում լսումներ չեն կազմակերպել:
- Խորհրդարանական խմբակցություններից լսումներ նախաձեռնել են միայն «Ճառուկյան» և «Ելք» խմբակցությունները: «Ճառուկյան» խմբակցության՝ դեղատոմսեր գրելու և դեղեր բաց թողնելու կարգին վերաբերող լսումներին նախորդել էր կառավարության որոշումը՝ դեղատներից դեղերի վաճառքը դեղատոմսերով դարձնելու մասին:
- «Ելք» խմբակցության հրավիրած խորհրդարանական լսումները վերաբերել են 2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձություններին: Լսումներին հաջորդել է նույն իրադարձությունների վերաբերյալ ԱԺ հայտարարություն ընդունելու մասին «Ելք»-ի նախագծի քննարկումը:

ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՆԱԽԱԶԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ խմբակցություն. 6-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի² ընթացքում ՀՀԿ-ն հեղինակել է 26 օրենսդրական նախաձեռնություն: Ընդունվել է դրանցից 9-ը, 11 նախագիծ դեռևս օրակարգ չի ընդգրկվել, 3-ը՝ նստաշրջանի օրակարգում է:

Ըստ parliamentmonitoring.am կայքի՝ նստաշրջանի ընթացքում «Հանրապետական» խմբակցության ամենաշատ հարց տված (15) և ելույթ ունեցած (12) պատգամավորը Խոսրով Հարությունյանն է: Ամենաշատը՝ 174 անգամ, կողմ է քվեարկել Արսեն Միխայլովը, ամենաքիչ կողմ քվեարկածը Հակոբ Հակոբյանն է (29)³: Դեմ քվեարկությունների ամենամեծ ցուցանիշը՝ 9, գրանցել է ՀՀԿ 14 պատգամավոր: Ամենաշատը ձեռնպահ քվեարկել է Հայկ Բաբուխանյանը (8): Ամենաշատը բացակայել է Կարեն Կարապետյանը (80):

Խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկածների տասնյակը կազմված է միայն ՀՀԿ-ականներից: Ամենաշատ դեմ, ձեռնպահ քվեարկածների տասնյակներում հանրապետականներ չկան: Ամենաշատ բացակայածների տասնյակում ՀՀԿ-ից 3-ն են՝ Հերմիտ Լադդայան, Արփինե Հովհաննիսյան, Սամվել Ֆարմանյան: Ամենաշատը հարց տված և ելույթ ունեցած պատգամավորների տասնյակներում ՀՀԿ-ից Խոսրով Հարությունյանն ու Էդուարդ Շարմազանովն են:

«Ծառուկյան» խմբակցություն. 6-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում «Ծառուկյան» խմբակցությունը հեղինակել է 15 օրենսդրական նախաձեռնություն: Դրանցից ընդունվել է 4-ը, 3-ի ընդգրկումը օրակարգ քվեարկության մերժվել է:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ նստաշրջանի ընթացքում «Ծառուկյան» խմբակցության պատգամավորներից ամենաշատը հարց տվել (34) և ելույթ է ունեցել Միքայել Մելքումյանը (23): Ամենաշատը կողմ են քվեարկել Վանիկ Ասատրյանը և Վարդան Բոստանջյանը՝ 137 անգամ, դեմ՝ Վահե Էնֆիաջյանը և Գևորգ Պետրոսյանը՝ 25, ձեռնպահ՝ Հակոբ Նազարյանը և Տատյանա Միքայելյանը՝ 17 անգամ:

Գագիկ Ծառուկյանը գլխավորում է խորհրդարանի ամենաշատ բացակայած պատգամավորների տասնյակը: Այս տասնյակում է «Ծառուկյան» խմբակցության ևս 4 պատգամավոր: Ամենաշատ ձեռնպահ քվեարկածների տասնյակը կազմված է միայն «Ծառուկյան» խմբակցության պատգամավորներից: Ամենաշատ հարց տված պատգամավորների տասնյակում առաջինը Միքայել Մելքումյանն է. այս տասնյակում են խմբակցության ևս 5 պատգամավոր: Ամենաշատ ելույթ ունեցած-ների տասնյակում կեսը «Ծառուկյան» խմբակցությունից են: Տասնյակը գլխավորում է Միքայել Մելքումյանը:

² Վիճակագրությունը ներառում է 6-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում գումարված արտահերթ նիստերի ու դրա ավարտից հետո հրավիրված արտահերթ նստաշրջանների տվյալները:

³ Հակոբ Հակոբյանը պատգամավոր է դարձել 2018թ. մայիսին՝ փոխարինելով պատգամավորական մանդատից հրաժարված Գրիգոր Ավայանին: Ամբողջ նստաշրջանի կտրվածքով ամենաքիչ կողմ քվեարկած հանրապետականը Կարեն Կարապետյանն է:

«Ելք» խմբակցություն. 6-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում «Ելք» խմբակցությունը հեղինակել է 15 օրինագիծ: Ընդունվել է դրանցից 5-ը, 5-ը օրակարգ չի ընդգրկվել, 4-ը նստաշրջանի օրակարգում է: Խմբակցության 1 նախագիծ քննարկվել և քվեարկությամբ մերժվել է: «Ելք»-ը միակ խմբակցությունն է, որը նստաշրջանի ընթացքում կառավարությանը հարցապնդում է ներկայացրել: Այն վերաբերել է Էլեկտրաէներգիայի ու գազի սակագներին, սպառման ծավալներին ու կորուստներին:

Ըստ **parliamentmonitoring.am** կայքի վիճակագրության՝ նստաշրջանի ընթացքում «Ելք» խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պատգամավորը Էդմոն Մարությանն է: Նա նաև խմբակցության ամենաշատ հարց տված (9) և ելույթ ունեցած (9) պատգամավորն է: Ամենաշատ հարց տված և ելույթ ունեցած պատգամավորների տասնյակներում Մարությանը «Ելք»-ի միակ ներկայացուցիչն է:

Խմբակցությունում ամենաշատը դեմ է քվեարկել Արամ Սարգսյանը (60). նա գլխավորում է ամենաշատ դեմ քվեարկած պատգամավորների տասնյակը, որտեղ կեսը «Ելք» խմբակցության անդամ են: Ամենաշատ ձեռնպահ քվեարկածների տասնյակում «Ելք»-ից պատգամավոր չկա: Խմբակցությունում ամենաշատ բացակայածը Սասուն Միքայելյանն է (63), ամենաշատ բացակայած պատգամավորների տասնյակում նա «Ելք»-ից միակն է:

ՀՅԴ խմբակցություն. 6-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում ՀՅԴ-ն որևէ նախագիծ չի հեղինակել: Մյուս խմբակցությունների հետ համահեղինակ է ընդունված 3 և նստաշրջանի օրակարգ ընդգրկված 2 նախագծի:

Ըստ **parliamentmonitoring.am** կայքի վիճակագրության՝ նստաշրջանի ընթացքում ՀՅԴ խմբակցության ամենաշատ հարց տված պատգամավորը Արմենուհի Կյուրեղյանն է (6), ամենաշատը ելույթ է ունեցել Արմեն Ռուստամյանը (4): Ամենաշատ հարց տված (Արմենուհի Կյուրեղյան) և ելույթ ունեցած (Արմեն Ռուստամյան) պատգամավորների տասնյակներում նրանք միակն են ՀՅԴ-ից:

Ամենաշատը կողմ է քվեարկել Սուրեն Մանուկյանը (172), դեմ՝ 3 անգամ, ՀՅԴ 5 պատգամավոր: Խմբակցությունում ամենաշատ բացակայածը Արմեն Ռուստամյանն է (47), նա նաև ամենաշատ բացակայած պատգամավորների տասնյակում է: Ամենաշատ կողմ, դեմ, ձեռնպահ քվեարկածների տասնյակներում ՀՅԴ պատգամավոր չկա:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2018 թվականի հունվարի 15-ին մեկնարկած ԱԺ 6-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում նախատեսվում էր ավարտին հասցնել կառավարման կիսանախագահական համակարգից խորհրդարանականին անցնելու գործընթացը: Խորհրդարանը պետք է ավարտեր օրենսդրական դաշտը 2015թ. փոփոխված Սահմանադրությանը համապատասխանեցնելու գործընթացը: Ամբողջությամբ ուժի մեջ պետք է մտնեին Սահմանադրության և ԱԺ կանոնակարգի այն դրույթները, որոնք խորհրդարանին տալիս են կառավարության գործունեության վերահսկման նոր լծակներ, մեծացնում են Ազգային ժողովի քաղաքական դերակատարումը, ընդլայնում ընդդիմադիր փոքրամասնության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում:

Նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովն առաջին անգամ կիրառել է Սահմանադրության փոփոխություններով իրեն վերապահված մի շարք կարևոր գործառույթներ. ընտրել է Բարձրագույն դատական խորհրդի անդամներ, Սահմանադրական դատարանի նախագահ, հանրապետության նախագահ: Այս փուլի եզրափակիչ ակտորդը եղել է վարչապետի առաջին ընտրությունը Ազգային ժողովի կողմից՝ բաց անհատական քվեարկությամբ: Ապրիլի 17-ին խորհրդարանը վարչապետի պաշտոնում ընտրել է ԶՂԿ առաջնորդ Սերժ Սարգսյանին:

Ապրիլի 17-ից հետո Հայաստանում քաղաքական իրադարձությունները զարգացել են «թավշյա հեղափոխության» տրամաբանությամբ: Համաժողովրդական շարժման պահանջով ապրիլի 23-ին Սերժ Սարգսյանը հրաժարվել է վարչապետի պաշտոնից, ինչը դարձյալ առաջ է բերել Ազգային ժողովում վարչապետի ընտրություն անցկացնելու անհրաժեշտություն: Մայիսի 8-ին վարչապետ է ընտրվել խորհրդարանական փոքրամասնության թեկնածուն՝ «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանում ձևավորվել է անսովոր քաղաքական իրավիճակ՝ փոքրամասնությունը ձևավորել է կառավարություն, իսկ խորհրդարանական մեծամասնությունը հայտարարել է ընդդիմություն դառնալու մասին:

Օրինաստեղծ գործունեության միտումները

3-րդ նստաշրջանում ԱԺ օրինաստեղծ գործընթացն իրացվել է երկու տարբեր իրավիճակներում՝ մինչև թավշյա հեղափոխությունը և դրանից հետո: Օրենսդրական գործունեության միտումները, սակայն, մնացել են անփոփոխ. պահպանվել է օրենքների հեղինակման ԱԺ-կառավարություն հարաբերակցությունը և խմբակցությունների քվեարկությունների տրամաբանությունը

3-րդ նստաշրջանում ընդունված օրենքների 90%-ը, ինչպես նախորդ նստաշրջաններում, հեղինակել է կառավարությունը:

Նստաշրջանի առաջին կեսին կառավարությունը հանդես է եկել օրենսդրական փոփոխությունների գերիազեցած օրակարգով: Նախաձեռնությունների հիմնական մասով ապահովվել է կիսանախագահականից խորհրդարանական համակարգի անցման օրենսդրական հիմքը, ինչպես նաև նախագահի առանցքային լիազորությունների փոխանցումը վարչապետին:

Նստաշրջանի ընթացքում ընդունված շուրջ 300 օրենքների 2/3-ը կառավարության կողմից ներկայացվել և խորհրդարանում քննարկվել է հունվար-մարտ ամիսների ընթացքում: Նստաշրջանի երկրորդ կեսում ԱԺ-ն ընդունել է 81 օրենք, ինչն ամբողջի հազիվ 1/3-ն է:

Թավշյա հեղափոխությունից հետո նոր կառավարության ներկայացրած օրինագծերի մեծ մասի իրական հեղինակը եղել է նախկին կառավարությունը. դրանք ԱԺ-ում քննարկվել են՝ պայմանավորված մեծ օրակարգում արդեն ընդգրկված լինելու, պետական կառավարման համակարգի գործունեության շարունակականությունը չխաթարելու և կառավարության որոշումներով արդեն հաստատված լինելու հանգամանքով:

Ներքաղաքական նոր իրավիճակում ՀՀ-ն կողմ է քվեարկել նոր կառավարության նախագծերին՝ խուսափելով բաց դիմակայություն ցուցաբերելու վարքագծից: Մյուս խմբակցություններն այդ նախագծերին դեմ չեն արտահայտվել, քանի որ ներկայացնողն իրենց վստահության քվեով ձևավորված կառավարությունն էր:

Արտահերթ նիստերը և սստաշրջանները՝ կառավարության «գործիք»

Գործնականում չի փոխվել արտահերթ նիստ-սստաշրջաններ հրավիրելու պրակտիկան: 3-րդ սստաշրջանի բոլոր 7 արտահերթ նիստերը և 1 սստաշրջանը գումարվել են կառավարության նախաձեռնությամբ:

Արտահերթ նիստերի և սստաշրջանների աննախադեպ թիվը պայմանավորված է քաղաքական իրավիճակի բացառիկությամբ: 7 արտահերթ նիստերից 1-ը հրավիրվել է նոր կառավարության ծրագրի քննարկման, 1-ը՝ պատգամավոր Մանվել Գրիգորյանին անձեռնմխելիությունից զրկելու ՋՋ գլխավոր դատախազի միջնորդությունները քննարկելու համար:

Այս տրամաբանության ներքո պետք է դիտարկել նաև 1 սստաշրջանի ընթացքում բացառիկ՝ ԱԺ 4 հատուկ նիստ հրավիրելու իրողությունը. դրանցից 1-ը գումարվել է ՋՋ նախագահի պաշտոնամուտի, մյուս 3-ը՝ ՋՋ վարչապետի ընտրության նպատակով: Խորհրդարանական ուժերի համար քաղաքական և օրինաստեղծ այս կարևորագույն գործիքը շարունակում է մնալ չկիրառելի, չնայած ԱԺ-ում ստեղծված քաղաքական հարաբերակցությունը խորհրդարանական ուժերին թույլ է տալիս հասնել նիստերի անցկացման փուլին:

Ամրապնդվել է արտահերթ նիստ-սստաշրջանների օրակարգում փոքրաթիվ նախագծեր ներառելու միտումը: Եթե 5-րդ գումարման ԱԺ-ում 1 սստաշրջանում ընդունված օրենքների գրեթե կեսը կառավարությունը ներկայացնում էր արտահերթ օրակարգով, ապա 6-րդ գումարման ԱԺ 3-րդ սստաշրջանում արտահերթ կարգով ընդունվել է օրենքների շուրջ 1/3-ը: ԱԺ կանոնակարգով սահմանված նոր ընթացակարգը լիարժեք պայմաններ է ապահովում հերթական նիստերի ընթացքում օրակարգային բոլոր նախագծերն ընդունելու համար:

Օրենքների արագ ընդունման նոր ռեկորդներ

ԱԺ 6-րդ գումարման 3-րդ հերթական և արտահերթ նիստ-սստաշրջաններում ընդունվել է 314 օրենք: Օրենքների այսպիսի քանակ նախորդ որևէ գումարման ընթացքում չի արձանագրվել:

Եթե 5-րդ գումարման ԱԺ 7-րդ նստաշրջանում ընդունվել է 112, իսկ 8-րդ նստաշրջանում՝ 116 օրենք, ապա 6-րդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանում այս թիվը կրկնակի աճել է. ԱԺ-ն այդ ժամանակահատվածում ընդունել է 252 օրենք: 3-րդ նստաշրջանում ընդունվել է 2-րդ նստաշրջանից 25%-ով ավելի օրինագիծ: Հաճախ խորհրդարանը 4 օրվա նիստերի օրակարգը սպառել է 2-3 օրում: Այս ռեկորդային ցուցանիշներն արձանագրվել են մի նստաշրջանի ընթացքում, որն առանձնացել է քաղաքական զարգացումների անկանխատեսելիությամբ:

Պատճառը ԱԺ կանոնակարգով նախագծերի քննարկման ժամկետների էական սահմանափակումներ մտցնող իրավակարգավորումներն են, որոնք քննարկումների գործընթացը զգալիորեն բովանդակազրկելով՝ այն վերածել են նախագծերի մակերեսային քննարկման և քվեարկության ֆորմալ պրոցեսի:

ԱԺ կանոնակարգը կառուցվել է նախագծերի բովանդակային քննարկումները ԱԺ մշտական հանձնաժողովների դաշտ տեղափոխելու, այդպիսով՝ հանձնաժողովների գործնական նշանակությունը մեծացնելու տրամաբանությամբ, սակայն դրա հետևանքով օրինագծերի բովանդակությունը, նպատակները, դրանցով կարգավորվող խնդիրները ինչպես պատգամավորների մեծամասնության, այնպես էլ հանրային ու մասնագիտական շրջանակների համար մնում են լիարժեքորեն չպարզաբանված, չքննարկված: Խնդիրը հատկապես ակտուալ է օրենսդրական փաթեթների քննարկման ժամանակ, որոնք կարող են ներառել մի քանի տասնյակ նախագծեր:

Պատգամավորների նախաձեռնողականությունն ու փոքրամասնության նկատմամբ լոյալության աճը

2-րդ և 3-րդ նստաշրջաններում խմբակցությունների հեղինակած նախագծերի քանակը նույնն է՝ 49 օրինագիծ: Սակայն խմբակցությունների նախաձեռնությունների հարաբերակցության մեջ նկատելի են որոշակի ներքին կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես՝ եռակի ավելացել են (2-նստաշրջան՝ 6, 3-րդ նստաշրջան՝ 19) պատգամավորների հեղինակած և ընդունված նախագծերը:

Այս էական տարբերությունը պայմանավորված է խորհրդարանական ուժերի դասավորության փոփոխություններով և ՀՀԿ-ի՝ բացարձակ մեծամասնությունը կորցնելու հանգամանքով: Խնդիրն այն է, որ մինչ թավշյա հեղափոխությունը խորհրդարանական մեծամասնության կողմից, ըստ էության, վարվում էր քաղաքական փոքրամասնության նախաձեռնությունների նկատմամբ ընդգծված մերժողականության քաղաքականություն: Իշխանափոխությունը ԱԺ-ում առաջ է բերել փոխադարձ լոյալության նոր մթնոլորտ: Հատկանշական է, որ ի տարբերություն 2-րդ նստաշրջանի՝ 1/3-ով ավելացել է իշխանությունը կորցրած ՀՀԿ-ի հեղինակած և ընդունված նախագծերի թիվը: Կրկնակի ավելացել է «Ծառուկյան» դաշինքի ընդունված օրինագծերի թիվը: Ի տարբերություն նախորդ նստաշրջանի, որի ընթացքում չի ընդունվել «Ելք» խմբակցության որևէ նախագիծ, վերջին նստաշրջանի նրա հաշվելչուում 5 ընդունված օրինագիծ կա:

Պատգամավորների հեղինակությամբ ընդունված օրինագծերի քանակական աճը ստեղծում է խմբակցությունների ակտիվ օրինաստեղծ գործունեության և նախաձեռնողականության աճի նախադրյալներ, ինչը կարող է հանգեցնել ԱԺ-կառավարություն՝ գրեթե անփոփոխ 90/10 հարաբերակցության փոփոխության:

Չօգտագործված ռեսուրսներ

Ապրիլի 9-ից ամբողջությամբ ուժի մեջ մտած Սահմանադրությամբ, նաև ԱԺ կանոնակարգ օրենքով ապահովվել է խորհրդարանի նոր գործառույթների գործարկման իրավական բազան, սակայն 3-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ խմբակցությունները դրանք կիրառելու մեծ ցանկություն չեն դրսևորվել:

- Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն $\frac{1}{4}$ -ի պահանջով կարող է ստեղծվել քննիչ հանձնաժողով՝ Ազգային ժողովի իրավասության և հանրային հետաքրքրության հարցերին վերաբերող փաստերը (բացառությամբ պաշտպանության և անվտանգության բնագավառների) ուսումնասիրելու նպատակով: Ընդդիմադիր խմբակցությունները կարող են նախագահել այն: ԱԺ 3-րդ նստաշրջանի ընթացքում քննիչ հանձնաժողով ստեղծելու նախաձեռնություն չի ցուցաբերվել:
- ԱԺ խմբակցություններին տրվել է կառավարությանը հարցապնդում ներկայացնելու հնարավորություն, որի պատասխանի և քննարկման հիման վրա կարող է քննարկման առարկա դառնել կառավարության առանձին անդամների հետագա պաշտոնավարման, ընդհուպ վարչապետին անվստահություն հայտնելու հարցը: «Ելք»-ը միակ խմբակցությունն է, որը նստաշրջանի ընթացքում կառավարությանը հարցապնդում է ներկայացրել: Այն վերաբերել է Էլեկտրաէներգիայի ու գազի սակագներին, սպառման ծավալներին ու կորուստներին: «Ելք»-ը նաև նախորդ նստաշրջանի ընթացքում էր օգտվել հարցապնդում ներկայացնելու իր իրավունքից: Այս հետևողականությունն ուշագրավ է խորհրդարանական ընդդիմությանը վերապահված մեխանիզմները կիրառելու և դրանք քաղաքականության մաս դարձնելու մշակույթի ձևավորման տեսանկյունից:
- Խմբակցություններին տրվել է հնարավորություն՝ գլխադասային հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում արտահերթ կարգով լիազումար նիստերի օրակարգ ընդգրկել օրենքների՝ իրենց հեղինակած և արտահերթ համարած նախագծերը: Նստաշրջանի ընթացքում ԱԺ խմբակցություններն այս հնարավորությունից չեն օգտվել:

Օրինաստեղծ գործունեության առանձնահատկությունները

6-րդ գումարման ԱԺ 3-րդ նստաշրջանի առաջին կեսին կառավարությունը հանդես է եկել օրենսդրական փոփոխությունների գերհագեցած օրակարգով: Նախաձեռնությունների հիմնական մասով ապահովվել է կիսանախագահականից խորհրդարանական համակարգի անցման օրենսդրական հիմքը, ինչպես նաև նախագահի առանցքային լիազորությունների փոխանցումը վարչապետին:

Ընդունված օրինագծերով կառավարման համակարգը ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որոնք ՀՀ վարչապետին օժտել են պետական իշխանության հավելյալ լծակներով և փաստացի միանձնյա կառավարման գործիքակազմով:

Նստաշրջանի ընթացքում ընդունված շուրջ 300 օրենքների 2/3-ը կառավարության կողմից ներկայացվել և խորհրդարանում քննարկվել է հունվար-մարտ ամիսների ընթացքում: Նստաշրջանի երկրորդ կեսում ԱԺ-ն ընդունել է 81 օրենք, ինչն ամբողջի հազիվ 1/3-ն է:

Հունվար-մարտ ամիսներին Ազգային ժողովն ընդունել է նախագահի առանցքային լիազորությունները վարչապետին փոխանցող մի շարք կարևոր օրենքներ՝ «Ներման մասին», «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին»:

Անվտանգության խորհուրդը՝ «Ենթակառավարություն»

2018թ. հունվարին կառավարությունն Ազգային ժողով է ներկայացրել «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի նախագիծը: Այն ընդունվել է ձայների 84 կողմ, 4 դեմ հարաբերակցությամբ: Նախագծի վերջնական տարբերակին կողմ են քվեարկել կոալիցիոն ՀՀԿ-ն և ՀՅԴ-ն, ինչպես նաև «Ծառուկյան» խմբակցությունը: «Ելք»-ը դեմ է քվեարկել օրինագծին:

Օրենսդրական նախաձեռնությունը իրավական մեխանիզմներ է ապահովում Սահմանադրության 152-րդ հոդվածի իրագործման համար, այն է՝ «Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»:

Համաձայն օրենքի՝ Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը եւ սահմանների անձեռնմխելիությանը վերաբերող հարցերը Անվտանգության խորհուրդը կարող է քննարկել, եթե նման առաջարկությամբ հանդես է գալիս վարչապետը, այսինքն, սա վարչապետին վերապահված բացառիկ իրավասություն է: Փաստացի, Անվտանգության խորհրդի որևէ այլ անդամ չի կարող այդ հարցերի վերաբերյալ քննարկում նախաձեռնել, եթե առաջարկը չի արժանանում վարչապետի հավանությանը:

Խորհրդի կազմում ընդգրկվում են վարչապետը, առաջին փոխվարչապետը, փոխվարչապետերը, Անվտանգության խորհրդի քարտուղարը, պաշտպանության և արտաքին գործերի նախարարները, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը, ոստիկանապետը և Չինված ուժերի գլխավոր շտաբի պետը:

Ի տարբերություն նախկին կարգի՝ գլխավոր դատախազը, ՍԴ նախագահը, Հանրապետության և Ազգային ժողովի նախագահները Անվտանգության խորհրդի անդամներ չեն. կառույցը կազմված է կառավարության անդամներից և վարչապետին կից մարմինների ղեկավարներից: Ախ նման կազմ նախատեսող օրենքով կառավարությունը, փաստացի, խնդիր է դրել ստեղծել այնպիսի մեխանիզմ, որը կերաշխավորի վարչապետին լիովին ենթակա խորհրդի կազմ: Սա այն դեպքում, երբ ՀՀ-ի սահմանների անձեռնմխելիությանն ու տարածքային ամբողջականությանն սպառնացող իրավիճակներում Ազգային ժողովին վերապահված է առանցքային դերակատարություն, այն է՝ հանրաքվեի անցկացման, պատերազմ հայտարարելուն կամ խաղաղություն հաստատելուն առնչվող հարցերով որոշումների կայացում:

«Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի այս կարգավորումներով վարչապետին վերապահվել է Ախ-ում միանձնյա օրակարգ թելադրելու իրավունք, խախտվել է որոշումների կայացման կոլեգիալության սկզբունքը: Խորհրդարանին և դատական համակարգին զրկելով երկրի անվտանգությանը և պաշտպանությանը վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունից՝ ստեղծվել է Սահմանադրությունը փաստացի շրջանցելու և գործադիրի որոշումները իշխանության մյուս թևերին պարտադրելու մեխանիզմ:

Ներման ինստիտուտի «օտարումը» նախագահից

«Ներման մասին» օրենքը՝ հարակից օրենքներում առաջարկվող փոփոխություններով երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ, ընդունվել է մարտի 7-ին, ձայների 63 կողմ, 31 դեմ հարաբերակցությամբ: «Ծառուկյան» և «Ելք» խմբակցությունները դեմ են քվեարկել:

Սահմանադրության 135-րդ հոդվածն ամրագրում է, որ դատապարտյալներին ներում շնորհելու հարցը օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է հանրապետության նախագահը, մինչդեռ 2018թ. մարտին ընդունված «Ներման մասին» օրենքը այս հարցում վճռորոշ դերակատարումը և առաջնային մանդատը վերապահում է ՀՀ վարչապետին: Օրենքով խախտվել է ՀՀ նախագահի սահմանադրական լիազորությունների շրջանակը, և Ազգային ժողովը, ի դեմս տվյալ պահի քաղաքական մեծամասնության, իր վրա է վերցրել դրա պատասխանատվության զգալի մասը:

Օրենքով անձին ներում շնորհելու նախաձեռնությունը բխում է բացառապես վարչապետից. նա է օժտված ներման խնդրագիրը Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովին ներկայացնելու բացառիկ իրավասությամբ: Հանձնաժողովի եզրակացությունները վարչապետի համար ունեն խորհրդատվական նշանակություն, ինչը նշանակում է, որ նա կարող է առհասարակ հաշվի չառնել եզրակացությամբ տրամադրված դիրքորոշումն ու հիմնավորումները:

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը ևս հաստատում է Վարչապետը, իսկ ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը վարչապետը Հանրապետության նախագահին կարող է ներկայացնել՝ առանց հարցը Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու:

Նախագահը զրկված է ներում շնորհելու վարչապետի առաջարկության (իրականում որոշման) իրականացումը կասեցնելու իրավական լծակներից: Նույնիսկ այն դեպքում, երբ համաձայն չլինելով տվյալ անձին ներում շնորհելու վարչապետի նախաձեռնությանը, առարկություններով ետ է վերադարձնում համապատասխան առաջարկությունը, վարչապետը կարող է առանց այդ առարկություններն ընդունելու նորից ստորագրելու համար դիմել նախագահին, որի դեպքում վերջինս կամ ստորագրում է այն, կամ դիմում Սահմանադրական դատարան: Վերջինը չանելու դեպքում ներում շնորհելու վարչապետի կողմից ներկայացված հրամանագրի նախագիծն ընդունված է համարվում օրենքի ուժով: Ըստ էության, լուծվում է նախագահին գործառնական մեկ լիազորությունից զրկելու հարցը՝ օգտվելով սահմանադրական համապատասխան նորմի ձևակերպումների լայն մեկնաբանելիության հանգամանքից: Անգամ ներում շնորհելու նախագահի հրամանագրերի նախագծի պատրաստումը վերապահվել է վարչապետին, և նախագահին թողնվել է միայն հրամանագրի տեքստի տակ ստորագրություն դնել-չդնելու երկընտրանքը:

Կառավարության կառուցվածքը՝ շահերի բախման առարկա

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքը՝ հարակից 62 օրենքներում առաջարկվող փոփոխությունների նախագծերով, 3-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի քննարկած ամենամեծ օրենսդրական փաթեթն է: Երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ԱԺ մարտի 23-ին գումարված արտահերթ Նիստի ընթացքում, ձայների 63 կողմ, 26 դեմ հարաբերակցությամբ: «Ծառուկյան» և «Ելք» խմբակցությունները դեմ են քվեարկել:

Գործադիր իշխանության կառուցվածքի փոփոխության անհրաժեշտությունը բխում էր սահմանադրական փոփոխությունների՝ վարչապետի լիազորությունների ընդլայնմամբ, փոխվարչապետերի ինստիտուտի, նոր մարմինների ներդրմամբ պայմանավորված գործառնությունների հստակեցման պահանջից: Փաթեթով, ըստ էության, ձևավորվում էր «վարչապետակենտրոն» գործադիր իշխանություն:

Փաթեթում ընդգրկված «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանվել է, որ Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանությունը, Պետական վերահսկողական և պահպանության ծառայությունները դառնում են վարչապետին ենթակա մարմիններ. առաջին 2-ը նախկինում կառավարությանն առընթեր մարմինների կարգավիճակ ունեին:

Խորհրդարանական քննարկումների ընթացքում կառավարությունը բավարար հիմնավորումներ չի ներկայացրել, թե պետական, հասարակական կարգի պահպանության ու անվտանգության ապահովման տեսանկյունից ինչ խնդիրներ էր հարուցել Ոստիկանության և ԱԿԾ-ի՝ կառավարությանն առընթեր մարմիններ լինելու կառուցվածքային նախկին լուծումը, և որն էր դրանք վարչապետի միանձնյա ենթակայության ներքո տեղափոխելու անհրաժեշտությունը: Խորհրդարանական ընդդիմության կարծիքով՝ ուժային առանցքային մարմինները վարչապետի ենթակայությանը հանձնելն ապահովում էր իրավաբաղաբական գործընթացների վրա ազդելու լայն հնարավորություն:

Նույն փաթեթով երեք փոխվարչապետերի և հատկապես առաջին փոխվարչապետի պորտֆելների ստեղծումը վարչապետին հնարավորություն է տվել նրանց միջև բաշխել գործադիր պատասխանատվության զգալի մասը: Վարչապետին է վերապահվել նաև փոխվարչապետերի համակարգման ենթակա ոլորտների ու գործառույթների որոշումը, իրեն փոխարինելիս առաջին փոխվարչապետին անցնող լիազորությունների շրջանակը: Խորհրդանշական էր նաև վարչապետին երկու նստավայր հատկացնելու որոշումը՝ կառավարության շենքում և նախագահի նախկին նստավայրում⁴:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 10-րդ հոդվածում տեղ է գտել ձևակերպում, որով կառավարության նիստերի անցկացման բաց ռեժիմը փոխարինվել է փակով: Հանրային հասանելիության, թափանցիկության այս սահմանափակումը հեղինակները բացատրել են կառավարության նիստերին առավել անկաշկանդ մթնոլորտ ձևավորելու, քննարկվող հարցերի վերաբերյալ ազատորեն դիրքորոշումներ արտահայտելու հնարավորություն ապահովելու անհրաժեշտությամբ: Հատկանշական է, որ փոփոխությունը նախաձեռնող կառավարությունը նիստերն անցկացնում էր դռնբաց, իսկ փակ ռեժիմով աշխատող վերջին կառավարությունը գործել է 2007-2008թթ.⁵ Սերժ Սարգսյանի վարչապետության օրոք:

Օրենքի 10-րդ հոդվածով նաև սահմանվել է, որ կառավարության նիստերին ներկա լինելու իրավունք ունեն հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և վարչապետի աշխատակազմերի ղեկավարները, պետական եկամուտների, քաղաքաշինության, միջուկային անվտանգության կարգավորման, վիճակագրական, անշարժ գույքի կադաստրի կոմիտեների եւ վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները, վարչապետի մամուլի քարտուղարը, ինչպես նաև վարչապետի հրավիրած այլ անձինք: Նոր կարգավորումներով կառավարության նիստերին մասնակցելու իրավունքից փաստացի զրկվել են բոլոր ինքնավար կառույցների ղեկավարները, գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը, Երևանի քաղաքապետը: Այդ հնարավորությունից զրկվել են նաև պատգամավորները, որոնց ներկայությունը նիստերին կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու սահմանադրական լիազորության եղանակներից մեկն է:

⁴ Որոշումը կայացվել է կառավարության ապրիլի 5-ի նիստում:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Պետական իշխանության մարմինների ընտրությունների պրակտիկան

Ապրիլի 9-ից ամբողջությամբ ուժի մեջ մտած Սահմանադրությունը Ազգային ժողովին օժտել է պետական կառավարման գործնականում բոլոր, այդ թվում՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող մարմինների ղեկավար կազմերի ընտրության, առանձին դեպքերում՝ նաև՝ պաշտոններից հետ կանչելու լիազորությամբ: Այսպիսով՝ խորհրդարանն ուղղակի պատասխանատվություն է կրում նրանց գործունեության և արդյունքների համար:

6-րդ գումարման ԱԺ 3-րդ նստաշրջանն իր նշանակությամբ բացառիկ էր մի քանի առումով:

Այս ժամանակահատվածում է ԱԺ-ն Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ընտրել ՀՀ նախագահ, նոր լիազորություններով օժտված և պետական ու քաղաքական իշխանության զգալի մասն իր ձեռքում կենտրոնացրած վարչապետ, նաև՝ ՍԴ նախագահ, Սահմանադրության ուժով ստեղծվող դատական իշխանության բարձրագույն մարմին՝ Բարձրագույն դատական խորհրդի 10 անդամներից 5-ին:

Այս գործընթացն ուղեկցվել է հանրային-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով, որոնք կտրուկ փոխել են իրավիճակը երկրում և փաստացի հանգեցրել պառլամենտարիզմի պատմության մեջ նախադեպը չունեցող հետևանքների: Քաղաքական վերադասավորումներից առաջ տեղի ունեցած նշանակումները կտրականապես տարբերվել են դրանց ընթացքում և հետո կատարվածներից:

Ընտրությունները խորհրդարանում՝ թավշյա հեղափոխությունից առաջ

Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրությունը

Համաձայն Սահմանադրության 173-րդ հոդվածի՝ Բարձրագույն դատական խորհուրդը դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող պետական անկախ մարմին է: ԲԴԽ-ի 10 անդամներից 5-ին ընտրում է Ազգային ժողովը, մյուս 5-ին՝ Դատավորների ընդհանուր ժողովը:

Սահմանադրությամբ ԲԴԽ-ի իրավասությունները սկսվում են ՀՀ չորրորդ նախագահի պաշտոնամուտի պահից՝ 2018թ. ապրիլի 9-ից, սակայն գործընթացի սահունությունն ապահովելու նպատակով Դատական օրենսգրքի անցումային դրույթներով սահմանվել է, որ ԲԴԽ 5 անդամների թեկնածություններն ԱԺ-ում առաջադրվում են մինչև 2018թ. փետրվարի 22-ը:

Խորհրդի 5 անդամներին առաջադրել են ԱԺ ՀՀԿ և ՀՅԴ խմբակցությունները: Առաջին կազմի 5 անդամների պաշտոններում առաջադրվել էին ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանի (5-ամյա ժամկետով), Սահմանադրական դատարանի խորհրդական Գևորգ Դանիելյանի (5-ամյա ժամկետով), իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ Լիպարիտ Մելիքանյանի (5-ամյա ժամկետով), Հայաստանի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության նախագահ Հայկ Հովհաննիսյանի (3-ամյա ժամկետով) և իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Սերգեյ Մեղրյանի (3-ամյա ժամկետով) թեկնածությունները: ԱԺ-ի կողմից նրանց ընտրությունից հետո նորընտիր Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից Խորհրդի նախագահ է ընտրել Գագիկ Հարությունյանին:

ՍԴ նախագահի ընտրությունը

Խորհրդարանը մարտի 21-ին փակ քվեարկությամբ 64 կողմ, 27 դեմ ձայներով ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ է ընտրել ԱԺ պետաիրավական հանձնաժողովի նախկին նախագահ Հրայր Թովմասյանին: Նա ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր էր, ՀՀԿ անդամ 2012 թվականից: 2013թ. ընդգրկվել է նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովում՝ դառնալով 2015թ.-ին հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների հիմնական «ճարտարապետներից» մեկը: Ավելի վաղ, մարտի 2-ին, ԱԺ-ն Հրայր Թովմասյանին ընտրել էր ՍԴ դատավոր, իսկ մարտի 5-ին ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը հայտարարել էր, որ մարտի 1-ին ՍԴ նախագահի պաշտոնից հրաժարական է տվել Գագիկ Հարությունյանը:

Սահմանադրությամբ բահմանվում է, որ ՍԴ նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, ԱԺ նախագահի առաջարկությամբ ՍԴ կազմից նշանակվում է ՍԴ նախագահ:⁵

Գործող «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքով հատուկ ՍԴ նախագահի նշանակման ընթացակարգ չի սահմանվում, ինչից հետևում է, որ սա կարգավորվում է այս օրենքի 141-րդ հոդվածով, որը վերաբերում է ՍԴ-ի դատավորի ընտրությանը: Իսկ այդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ «Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության հարցը քննարկվում է թեկնածուի առաջադրումից հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում»:

⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 83, մաս 2-րդ

Եթե նույնիսկ մարտի 23-ից անմիջապես հետո ԱԺ նախագահը ՍԴ նախագահի պաշտոնում առաջարկեր Հայրենիք Թովմասյանի թեկնածությունը, ապա լավագույն դեպքում այդ հարցը կարող էր լուծվել միայն ապրիլի 10-ին՝ քանի որ ԱԺ հաջորդող հերթական քառօրյա նիստերը մեկնարկում էին այդ օրը: Այդ դեպքում ՍԴ նախագահի նշանակման գործընթացը պետք է կարգավորվեր ապրիլի 9-ին լիարժեքորեն ուժի մեջ մտնող Սահմանադրության փոփոխությունների՝ ՍԴ-ին վերաբերող գլխի կարգավորումներով, որոնցով սահմանվում է, որ ՍԴ նախագահին ոչ թե Ազգային ժողովն է ընտրում, այլ Սահմանադրական դատարանը՝ իր կազմից: Ընդ որում՝ ի տարբերություն նախորդ սահմանադրափոփակյալ կարգավորումների, որոնց համաձայն ՍԴ նախագահը պաշտոնավարում էր մինչև 70 տարին լրանալը, սահմանադրական նոր փոփոխություններով այդ ժամկետը սահմանափակվում է 6 տարով, և երկրորդ ժամկետ չի նախատեսվում:

Միաժամանակ, Սահմանադրության 213-րդ հոդվածով սահմանվում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը, այսինքն՝ մինչև 2018թ. ապրիլի 9-ը նշանակված ՍԴ նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականին ընդունված Սահմանադրությամբ նախատեսված ժամկետի ավարտը:

Վերոնշյալ իրավանորմերի համադրումն ու վերլուծությունը վկայում են, որ քաղաքական բազմաթիվ օպերացիայի նպատակն էր Հայրենիք Թովմասյանին նվիրել ՍԴ նախագահի պաշտոնը՝ մինչև վերջին փոփոխություններով Սահմանադրության ուժի մեջ մտնելը: Այսպիսով միանգամից լուծվում էր երկու խնդիր. Հայրենիք Թովմասյանին հնարավորություն տալ ՍԴ նախագահի պաշտոնն զբաղեցնել մինչև 70 տարին լրանալը, երկրորդ՝ թույլ չտալ, որպեսզի այդ պաշտոնում նրա նշանակումը կախվածության մեջ ընկնի ՍԴ կազմից, ինչի պայմաններում քաղաքական այդ խնդրի լուծման երաշխավորվածությունն էականորեն նվազում էր:

ՀՀ նախագահի ընտրությունը

ՀՀ Սահմանադրության վերջին փոփոխություններով հանրապետության նախագահը զրկվում է պետական կառավարման իր նախկին գործառույթների մեծ մասից, որոնք բաշխվում են խորհրդարանի և կառավարության միջև:

Սահմանադրությամբ⁶ ՀՀ նախագահն ընտրվում է խորհրդարանի կողմից՝ պաշտոնավարման 7 տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու հնարավորության: Նախագահ կարող է ընտրվել անկուսակցական, քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող և վերջին վեց տարում ՀՀ-ում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող անձը:

Նախագահի թեկնածու առաջադրելու բացառիկ իրավունքը վերապահվել է պատգամավորներին՝ նրանց ընդհանուր թվի առնվազն 1/4-ի նախաձեռնությամբ: 6-րդ գումարման ԱԺ-ում 105 մանդատների առկայությամբ պայմանավորված՝ 26-ը նվազագույն շեմն է: Հատկանշական է, որ խմբակցությունները զրկված են այդ իրավունքից:

ՀՀ նախագահի ընտրության սահմանադրական իրավանորմերը բխում են քաղաքական մեծամասնության առաջադրած թեկնածուի ընտրությունը գործնականում պարտադրելու տրամաբանությունից, թեև արտաքուստ հիմքում քաղաքական մեծամասնության և փոքրամասնության միջև այդ կոնսենսուսի ձևավորման նախադրյալների ստեղծումն ու խմբակցություններին երկխոսության մղելն է:

Համաձայն Սահմանադրության⁷ ԱԺ-ում հանրապետության նախագահ է ընտրվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն $\frac{3}{4}$ -ի (սվազագույնը՝ 76 պատգամավորի) քվե ստացած թեկնածուն: Ենթադրելի էր, որ 64 պատգամավոր ունեցող ՀՀԿ-ՀՅԴ կոալիցիան անցողիկ թեկնածու առաջադրելու համար պետք է քաղաքական բանակցությունների գնար մյուս երկու ընդդիմադիր խմբակցությունների հետ: Նման գործընթաց, սակայն, Արմեն Սարգսյանի թեկնածության հարցի շուրջ խորհրդարանում տեղի չի ունեցել: Պատճառը Սահմանադրության նույն հոդվածի հաջորդող իրավակարգավորումների տողատակում է. եթե գաղտնի քվեարկության արդյունքում պատգամավորների $\frac{3}{4}$ ձայներով հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անմիջապես անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որում ընտրվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն $\frac{3}{5}$ -ի ձայները (տվյալ դեպքում՝ 64 քվե) ստացած թեկնածուն, կրկին չընտրվելու դեպքում էլ անմիջապես անցկացվում է երրորդ փուլ, որում ընտրվում է արդեն ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելի (սվազագույնը՝ 53) ձայներն ստացած թեկնածուն:

Նախագահի թեկնածու առաջադրելու մտադրության մասին հայտարարել էր նաև «Ելք» խմբակցությունը, սակայն 9 պատգամավոր ունեցող խմբակցությանը չհաջողվեց ստանալ ընդդիմադիր մյուս՝ «Ծառուկյան» խմբակցության աջակցությունը՝ անհրաժեշտ 26 պատգամավորի ստորագրությունն ապահովելով թեկնածությունն ներկայացնելու համար: Արդյունքում՝ խորհրդարանում քննարկվեց միայն կոալիցիոն քաղաքական մեծամասնության ներկայացրած թեկնածությունը:

Չնայած խորհրդարանն իր պատմության մեջ առաջին անգամ էր ընտրում Սահմանադրությամբ պետության գլուխը հանդիսացող կառավարման սուբյեկտին, խորհրդարանում մարտի 1-ին կայացած՝ Արմեն Սարգսյանի թեկնածության շուրջ քննարկումները սպասվածից ավելի պասիվ էին (հնչել է ընդամենը 7 հարց և 11 ելույթ):

Մարտի 2-ին խորհրդարանը փակ գաղտնի քվեարկությամբ 90 կողմ ձայնով, սահմանադրականության հետ կապված ակնառու խնդիրների առկայությամբ, առաջին իսկ փուլում ՀՀ 4-րդ (խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում՝ 1-ին) նախագահ է ընտրել Արմեն Սարգսյանին: Վերջինիս պաշտոնամուտի արարողությունը, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ և ԱԺ խորհրդի որոշմամբ նախատեսված կարգի համաձայն, անցկացվել է ապրիլի 9-ին: Այդ պահից Հայաստանի Հանրապետությունում հաստատվել է խորհրդարանական կառավարման համակարգ:

⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 125

ՀՀ նախագահի ընտրության լեգիտիմության հիմնահարցը

Սահմանադրության 124-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ նախագահի պաշտոնը կարող է զբաղեցնել վերջին 6 տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող և վերջին 6 տարում ՀՀ-ում մշտապես բնակվող յուրաքանչյուր ոք: Այս պահանջներին Արմեն Սարգսյանի չհամապատասխանելու վերաբերյալ հանրային-քաղաքական շրջանակներում լուրջ կասկածներ կային: «Ելք»-ը, հղում կատարելով Հայաստանում Մեծ Բրիտանիայի Թագավորության դեսպանատնից ստացված փաստաթղթերին, պնդում էր, որ նա մինչև 2014թ. եղել է Մեծ Բրիտանիայի քաղաքացի: Աժ-ում քննարկումների ժամանակ միայն «Ելք»-ի պատգամավորների համառ պահանջներից հետո Սարգսյանի թեկնածությունն առաջադրած ՀՀԿ-ն ստիպված եղավ ներկայացնել ՀՀ Ոստիկանությունից ստացված տեղեկանք այն մասին, որ Սարգսյանը վերջին 6 տարիներին հանդիսացել է ՀՀ քաղաքացի և մշտական հաշվառում է ունեցել Հայաստանում: Սակայն այդպես էլ չեն ներկայացվել այն հիմքերը, որոնք ապացուցում էին նախագահի թեկնածուի կողմից Մեծ Բրիտանիայի քաղաքացիությունից մինչև 2012թ. մարտ ամիսը հրաժարված լինելու հանգամանքը:

Այս իմաստով նախագահի ընտրության օրինականության հարցը մնացել է բաց: Խորհրդարանն ինքն է դարձել Արմեն Սարգսյանի ընտրության օրինականության ճգնաժամի հարուցման պատճառ՝ առաջնորդվելով ոչ թե հանրային կասկածները փարատելու և հիմքերի լիարժեքությունն ապահովելու՝ իրավական պետության առանցքային սկզբունքով, այլ խորհրդարանական մեծամասնության քաղաքական հաշվարկները բավարարելու որոշմամբ՝ հավելյալ անգամ պառլամենտարիզմի հիմնարար սկզբունքները ստորադասելով կուսակցական ու անձնական շահերի սպասարկմանը:

Ընտրությունները խորհրդարանում՝ թավշյա հեղափոխության ընթացքում և դրանից հետո

ՀՀ վարչապետի ընտրությունը. Սերժ Սարգսյան

3-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանն առաջին անգամ կիրառել է վարչապետ ընտրելու՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքը: Խորհրդարանում անցկացվել է վարչապետի 3 ընտրություն: Առաջինը՝ Սերժ Սարգսյանի ընտրությունը (17.04.2018թ.), ուղեկցվել է «Մերժիր Մերժին» բողոքի շարժմամբ: Երկրորդ ընտրությամբ (01.05.2018թ.) խորհրդարանական փոքրամասնության թեկնածուն՝ Նիկոլ Փաշինյանը, չի ընտրվել: Երրորդ անգամ (08.05.2018թ.) ձայների 59 կողմ, 42 դեմ հարաբերակցությամբ Փաշինյանն ընտրվել է վարչապետ:

Նախագահի լիազորությունների ժամկետի ավարտից շուրջ 2 ամիս առաջ՝ հունվարին⁸, կառավարության ներկայացրած օրենսդրական փաթեթի շրջանակում խորհրդարանը փոխել է վարչապետի ընտրության ընթացակարգը: Աժ կանոնակարգ օրենքի համապատասխան հոդվածը մինչ այդ սահմանում էր, որ վարչապետի ընտրության հարցը քննարկվում է թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո՝ Աժ առաջիկա հերթական նիստերում: Ըստ այդ իրավակարգավորման՝ վարչապետի ընտրության հարցը պետք է քննարկվեր մայիսի 2-ին մեկնարկող հերթական քառօրյա ընթացքում: Աժ կանոնակարգի փոփոխված հոդվածով⁹ սահմանվում է, որ վարչապետի ընտրության հարցը քննարկվում է թեկնածուների առաջադրման յոթնօրյա ժամկետը լրանալուց հետո հաջորդ օրը՝ իրավունքի ուժով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում:

Աժ կանոնակարգը նաև սահմանում է, որ վարչապետն ընտրվում է անվանական քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ուշագրավ է, որ խորհրդարանի կողմից իշխանության կամ պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների (ներառյալ՝ Աժ ղեկավարության) ընտրությունների շարքում վարչապետի ընտրությունը միակն է, որի անցկացման համար, բացառության կարգով, ընտրվել է բաց քվեարկության ռեժիմը:

Սահմանադրությամբ վարչապետի թեկնածության առաջադրման բացառիկ իրավունքը Աժ խմբակցություններին է: Մինչև օրենքով սահմանված ժամկետի ավարտը՝ ապրիլի 16-ը, վարչապետի պաշտոնի համար թեկնածու առաջադրելու իրավունքից համատեղ օգտվել են կոալիցիոն գործընկերներ ԶԿԿ-ն և ԶՅԴ-ն: Այլընտրանքային թեկնածու չի առաջադրվել:

Ապրիլի 17-ին վարչապետի ընտրության հարցի քննարկման նպատակով հրավիրված հատուկ նիստը գումարվել է մայրաքաղաքում ծավալված զանգվածային անհնազանդության շարժման ուղեկցությամբ. մարտի 31-ից Աժ «Ելք» խմբակցության և դրա մաս կազմող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը սկսել էր Սերժ Սարգսյանի՝ վարչապետ ընտրվելու գործընթացը կասեցնելուն ուղղված համաժողովրդական շարժում: «Քայլ արա» կարգախոսի ներքո Գյումրիից Երևան քայլարշավով սկսված, ապրիլի 13-ից Երևանի Ֆրանսիայի հրապարակում և հարակից փողոցներում շարունակված անժամկետ հավաքներով և նստացույցերով, հանրային ու պետական պահպանության օբյեկտների շրջափակումով այն աստիճանաբար վերածվել էր անհնազանդության զանգվածային գործողությունների և գործնականում անվերահսկելի համաժողովրդական շարժման:

Հատուկ նիստին մասնակցել են Աժ բոլոր 4 խմբակցությունները՝ բացառությամբ «Ելք» խմբակցության ԶՊ կուսակցությունը ներկայացնող 4 պատգամավորների: Քննարկումներն ընթացել են փողոցում կատարվող իրադարձությունների լիակատար անտեսմամբ՝ հաստատելով խորհրդարանում և հանրապետությունում տարբեր իրականությունների առկայությունը: Մեծամասնությունն ու իր վարչապետի թեկնածուն փորձում էին տպավորություն ստեղծել, թե իրավիճակը լիովին վերահսկում են, և դրսում կատարվող իրադարձությունները որևէ հետևանք չէին կարող ունենալ:

⁸ Աժ կանոնակարգ օրենքի փոփոխությունը ներառված էր Սահմանադրական դատարանի մասին օրենքին կից ներկայացված օրենսդրական փոփոխությունների փաթեթում, ընդունվել է հունվարի 17-ի նիստում

⁹ Աժ կանոնակարգ, հոդված 140, կետ 3

Վարչապետի պաշտոնում Սերժ Սարգսյանն ընտրվել է ձայների 77 կողմ, 17 դեմ հարաբերակցությամբ: Որպես վարչապետ Սարգսյանը պաշտոնավարել է ընդամենը մեկ շաբաթ:

ՀՀ վարչապետի հաջորդ երկու ընտրությունները. Նիկոլ Փաշինյան

Հայաստանի խորհրդարանական կառավարման համակարգի առաջին վարչապետի արագ հրաժարականով գործարկվել է Սահմանադրությամբ նախատեսված ընթացակարգը, համաձայն որի՝ վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն առաջադրում են վարչապետի թեկնածուներ: «Ելք» խմբակցությունը, հիմնվելով խմբակցության ղեկավար, համաժողովրդական շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ հանրային մեծ վստահության, նաև՝ ՀՅԴ և «Ծառուկյան» խմբակցությունների հայտնած աջակցության վրա և խախտելով հայկական պառլամենտարիզմում հաստատված՝ «հաղթող մեծամասնության» հետ կապված բոլոր պատկերացումներն ու մշակույթը, վարչապետի պաշտոնում առաջադրել է Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը:

ՀՀԿ խմբակցությունը հրաժարվել է թեկնածու առաջադրել, չնայած պետական իշխանության հիմնական լծակներն անցել էին ՀՀԿ առաջին փոխնախագահ, ՀՀ առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Կարեն Կարապետյանին, և խորհրդարանական մեծամասնությունը պահպանում էր ինչպես վարչապետի թեկնածու առաջադրելու, այնպես էլ ընտրելու բոլոր հնարավորությունները: Խորհրդարանական մեծամասնությունը պաշտոնապես հայտարարել է, թե խմբակցությունը «չի խոչընդոտի» փոքրամասնության թեկնածուի ընտրությանը:

Մայիսի 1-ին կայացած ԱԺ հատուկ նիստում գրանցվել է 102 պատգամավոր, քվեարկությանը մասնակցել է 100-ը. ձայների 45 կողմ, 55 դեմ հարաբերակցությամբ Նիկոլ Փաշինյանը վարչապետի պաշտոնում չի ընտրվել:

Քվեարկության արդյունքը հանգեցրել է Սահմանադրությամբ նախատեսված հաջորդ ընթացակարգի գործարկմանը, համաձայն որի՝ վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից 7 օր հետո անցկացվում է նոր ընտրություն, որին, սակայն, կարող են մասնակցել ոչ թե խմբակցությունների, այլ ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի առաջադրած թեկնածուները: ՀՀԿ-ն նորից հրաժարվել է վարչապետի թեկնածություն առաջադրել, 35 ստորագրության նվազագույն շեմն ապահովել են «Ելք», ՀՅԴ և «Ծառուկյան» խմբակցությունների պատգամավորները. կրկին առաջադրվել է Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը: Մայիսի 8-ին հրավիրված ԱԺ արտահերթ նիստում, քաղաքական մեծամասնության աջակցությամբ, ձայների 59 կողմ, 42 դեմ հարաբերակցությամբ Հայաստանի 16-րդ վարչապետ է ընտրվել «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը: Նրա օգտին քվեարկել են «Ելք», «Ծառուկյան» և «Դաշնակցություն» խմբակցությունները և 13 պատգամավոր ՀՀԿ խմբակցությունից:

Վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի 2 ընտրություններն ուղեկցվել են հայկական պառլամենտարիզմի համար աննախադեպ առանձնահատկություններով:

- Խորհրդարանի պատմության մեջ առաջին անգամ քաղաքական փոքրամասնությանը հաջողվել է ոչ միայն անայլընտրանք թեկնածություն առաջադրել խորհրդարանում (քաղաքական մեծամասնության բացահայտ և քողարկված դիմադրության պայմաններում), այլև ապահովել իր թեկնածուի հաղթանակը: Քաղաքական որոշումների կայացման «ծանրության կենտրոնը» քաղաքական կուլիսային հարթակներից տեղափոխվել էր հրապարակ, և իշխանություն ունեցող քաղաքական թիմը կորցրել էր հրապարակի վրա որևէ ձևով ազդելու հնարավորությունը:
- Առաջին անգամ հասարակությանը հաջողվել է խորհրդարանին քվեարկության կոնկրետ ելք պարտադրել: Հայաստանի 3-րդ հանրապետության ողջ պատմության ընթացքում հանրությունը երբևէ պառլամենտի և առանձին պատգամավորի ընդունած որոշման վրա այնպիսի անուղղակի ներգործություն չի ունեցել, որքան մայիսի 1-ին և 8-ին, ինչը փաստացի կանխորոշել է իրադարձությունների հետագա ընթացքը:
- Հայաստանում առաջին անգամ արձանագրվել է երկրի ղեկավարի ընտրության, այսպես կոչված, սահմանային ընթացակարգի կիրառում: Եթե ընտրության երկրորդ փուլում ևս հնարավոր չլիներ վարչապետ ընտրել, օրենքի ուժով Ազգային ժողովը պետք է արձակվեր:
- Առաջին անգամ ստեղծվել է մի իրավիճակ, երբ կառավարության գործունեության պատասխանատվությունը ստանձնել է խորհրդարանական փոքրամասնությունը, իսկ հարաբերական մեծամասնությունը դարձել է ընդդիմություն:

ՍԴ անդամների տապալված ընտրություններ

Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանի 9 դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով, 12 տարի ժամկետով: 3-ական թեկնածու առաջարկելու իրավասությամբ օժտված են հանրապետության նախագահը, կառավարությունը, Դատավորների ընդհանուր ժողովը: ՍԴ դատավոր կարող է ընտրվել 40 տարին լրացած, միայն 33 քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական եւ բարոյական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, հայերենին տիրապետող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից առաջադրվող թեկնածուի համար առկա է լրացուցիչ պահանջ՝ նա պետք է դատավոր լինի:

3-րդ նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը քննարկել է ՍԴ դատավորի 2 թեկնածություն. 2 թեկնածուներն էլ չեն ընտրվել: Առաջին ընտրությունը տեղի է ունեցել մայիսի 4-ին: 33 նախագահի կողմից առաջադրվել էր Էմիլ Բաբայանի թեկնածությունը, որին սատարում էր նաև խորհրդարանական մեծամասնությունը: Խորհրդարանական ընդդիմության բոյկոտի պայմաններում տեղի ունեցած քվեարկության արդյունքով թեկնածուն ստացավ 53 ձայն՝ անհրաժեշտ 63-ի փոխարեն:

Երկրորդ՝ 33 վճռաբեկ դատարանի Զրեական պալատի դատավոր Ելիզավետա Դանիելյանի թեկնածությունն առաջադրվել էր Դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Յունիսի 13-ին, կրկին խորհրդարանական ընդդիմության բոյկոտի պայմաններում, թեկնածուն ստացավ ընդամենը 36 ձայն:

Աժ քննարկումների ընթացքում քաղաքացիական հասարակությունը բարձրացրել է թեկնածուների առաջադրման ողջ գործընթացի բավարար թափանցիկության, գործող ընթացակարգերը վերանայելու պահանջ: Թերևս այս հանգամանքը հաշվի առնելով՝ 33 նախագահը Էմիլ Բաբայանի ընտրության տապալումից հետո դիմել է ՍԴ՝ վիճարկելով նոր թեկնածու առաջադրելու համար տասնօրյա ժամկետի սահմանափակումը:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

3-րդ նստաշրջանում խորհրդարանը 2 անգամ առնչվել է պատգամավորին անձեռնախելությունից զրկելու գործընթացին առաջինը վերաբերում էր «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանին, երկրորդը՝ ՀՀԿ խմբակցության անդամ, Երկրապահ կամավորականների միության նախագահ Մանվել Գրիգորյանին: Ընթացակարգով և արդյունքներով տարբեր այս գործընթացներն ի հայտ են բերել իրավակարգավորումներին և դրանց կիրառմանն առնչվող որոշ խնդիրներ:

Նիկոլ Փաշինյանի ձերբակալումը և ԱԺ չկայացած նիստը

Ապրիլի 22-ին, Երևան քաղաքի Արցախի փողոցում համաժողովրդական շարժման հերթական երթն առաջնորդելիս, իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի գործադրմամբ տարածքից հեռացվել էին Ազգային ժողովի «Ելք» խմբակցության միանգամից 3 պատգամավորներ՝ Նիկոլ Փաշինյանը, Արարատ Միրզոյանը և Սասուն Միքայելյանը:

Գլխավոր դատախազության պարզաբանմամբ՝ պատգամավորները ձերբակալվել էին «ՀԶԾ վարույթում քննվող քրեական գործի շրջանակներում հանցագործության կատարումը կանխելու նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի 225.1 հոդվածով նախատեսված հանցագործության՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք դիտավորությամբ կազմակերպելու և անցկացնելու անմիջականորեն ծագած կասկածանքով»¹⁰: Հաղորդագրության մեջ նշվում էր, որ պատգամավորները հավաքները կազմակերպել և անցկացրել էին «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգի խախտմամբ, չէին իրազեկել լիազոր մարմին, շրջափակել էին քաղաքի փողոցները, խոչընդոտել հարակից շենքերի ելումուտը և այլն: Գլխավոր դատախազությունը նաև տեղեկացրել էր, որ պատգամավորների ձերբակալման մասին անհապաղ տեղեկացվել է Ազգային ժողովի նախագահին՝ Սահմանադրության 96-րդ հոդվածով սահմանված կարգով:

Իրավապահներն իրենց գործողությունները ներկայացնում էին որպես ձերբակալություն հանցագործություն կատարելու պահին, սակայն պատգամավորների ներկայացուցիչները դա որակում էին որպես առևանգում՝ նկատի ունենալով իրականացված գործողության ժամանակ գործադրված կոշտ մեթոդները և այն հանգամանքը, որ տևական ժամանակ անհայտ էր Նիկոլ Փաշինյանի գտնվելու վայրը:

¹⁰ Գլխավոր դատախազության հաղորդագրություն, 22.04.2018, <http://www.prosecutor.am/am/mn/7072/>

Ապրիլի 23-ին գլխավոր դատախազը Նիկոլ Փաշինյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդություն է ներկայացրել խորհրդարան: Այդ մասին լրագրողներին հայտնել է առաջին փոխվարչապետ Կարեն Կարապետյանը՝ հավելելով, որ դիմելու է գլխավոր դատախազին, որպեսզի վերջինս Ազգային ժողովից հետ կանչի միջնորդությունը: Կարապետյան-Փաշինյան հանդիպումից կարճ ժամանակ անց պատգամավորն ազատ է արձակվել, իսկ դրանից մի քանի ժամ անց՝ ընդամենը 7 օր պաշտոնավարած վարչապետ Սերժ Սարգսյանը հայտարարել է իր հրաժարականի մասին: Ապրիլի 23-ի երեկոյան գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, որ «միջնորդությունը հետ վերցնելու վարչապետի դիմումն ստացվել է և հարգվել»: Ազգային ժողովում Նիկոլ Փաշինյանին անձեռնմխելիությունից զրկելու հարցի քննարկում տեղի չի ունեցել:

Պատգամավորների ձերբակալման գործընթացն ուղեկցվել է իրավաչափության առումով վիճահարույց խնդիրներով: Մասնավորապես՝

- Սահմանադրության 96-րդ հոդվածը սահմանում է, որ պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Դատախազությունը հայտարարել է, որ պատգամավորները ձերբակալվել են «հանցանք կատարելու պահին»՝ այս կերպ «լուծելով» խորհրդարանի համաձայնությունն ստանալու խնդիրը: Հաշվի առնելով իրողությունը, որ այդպես էլ հնարավորություն չի ստեղծվել ծանոթանալ տվյալ իրավիճակում ոստիկանության աշխատակիցների գործողությունների իրավական գնահատականներին, անհնար է հասկանալ, թե որքանով էին դրանք իրավաչափ:
- Քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ ձերբակալված անձն իրավունք ունի անմիջապես իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառները, մերձավոր ազգականներին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին, ինչպես նաև հրավիրել փաստաբան: Դրանք ապահովվելու պարտականությունը դրված է վարույթն իրականացնող մարմնի վրա: Նիկոլ Փաշինյանի պարագայում վերջին 2 իրավունքները չեն ապահովվել, քանի որ տևական ժամանակ վարույթն իրականացնող մարմինը նախատեսված գործողությունները չի իրականացրել:
- Աժ կանոնակարգով սահմանված կարգի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Վերջինս այդ մասին անմիջապես տեղեկացնում է տվյալ պատգամավորին, իսկ եթե դա անհնար է, հանդես է գալիս հայտարարությամբ:

Որևէ տեղեկություն չկա այն մասին, թե արդյոք ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը գլխավոր դատախազի միջնորդագրի վերաբերյալ հայտնել է անազատության մեջ գտնվող Նիկոլ Փաշինյանին: Հայտնի չէ նաև, թե կոնկրետ երբ է գլխավոր դատախազը միջնորդագիրը ներկայացրել ԱԺ նախագահին՝ ապրիլի 22-ին, թե 23-ին: ԱԺ նախագահը և քաղաքական մեծամասնությունը թերևս տրամադրված էին գաղտնի պահել գործընթացը մինչև որոշակի փուլ, քանի որ միայն փոխվարչապետի վերոնշյալ հայտարարությունից հանրությունը տեղեկացավ դատախազի միջնորդության մասին:

Խորհրդարանական մեծամասնությունը Նիկոլ Փաշինյանի ձերբակալման, ապա նաև ձերբակալվածի կարգավիճակում նրա իրավունքների պատշաճ պաշտպանության, քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու հիմքերի առկայության նկատմամբ ցուցաբերել է լիարժեք անտարբերություն՝ առաջնորդվելով քաղաքական որոշումների կատարումը ավարտին հասցնելու տրամաբանությամբ:

Հիմնավոր է ենթադրել, որ ԱԺ մեծամասնությունը հակված է եղել բավարարել ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագրերը՝ դրանց բովանդակությանը, հիմքերի արժանահավատությանը, լիարժեքությանը ծանոթացած չլինելով: Իրադարձությունների զարգացման անսպասելի ընթացքը կանխել է ԱԺ մեծամասնության ծրագրերի իրականացումը:

Մանվել Գրիգորյանին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը ԱԺ կանոնակարգի հարուցած իրավական խոչընդոտը

Նույն նստաշրջանի ընթացքում գլխավոր դատախազը 2-րդ անգամ պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու նախաձեռնությամբ խորհրդարանին դիմել է հունիսի 19-ին, Ազգային անվտանգության ծառայության կողմից Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասի (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հատկանիշներով հարուցված քրեական գործի շրջանակում: Միջնորդությունը վերաբերել է ԱԺ պատգամավոր, ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանին:

Հունիսի 18-ին գլխավոր դատախազությունը տեղեկատվություն է հրապարակել, համաձայն որի՝ ԱԺ պատգամավոր Մանվել Գրիգորյանը, ապօրինի կերպով ձեռք բերելով մեծ քանակությամբ հրազեն և ռազմամթերք, դրանք պահել է իրեն պատկանող կամ իր փաստացի տիրապետության տակ գտնվող տարածքներում: Հունիսի 16-ին պատգամավորը, Սահմանադրության 96-րդ հոդվածով սահմանված կարգի պահպանմամբ, ձերբակալվել է:

Եվս 2 քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հարուցվել է Մանվել Գրիգորյանի փաստացի տիրապետման տակ գտնվող ԲԲԸ-ի տարածքում ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք պահելու և ԵԿՄ ղեկավար անձանց (այդ թվում՝ Մ. Գրիգորյանի) կողմից կազմակերպության կարիքների համար ՊՆ, ինչպես նաև 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին առանձին քաղաքացիների և կազմակերպությունների կողմից տրամադրված առանձնապես խոշոր չափերով պարենային և այլ ապրանքների յուրացման դեպքերի առթիվ:

Որպես պատգամավորի նկատմամբ խափանման միջոց կալանավորումն ընտրելու հիմնավորում նշվել է, որ ըստ քրեական գործերի նյութերի՝ խուզարկության ընթացքում Մանվել Գրիգորյանը քննությանը խոչընդոտելու, սպասվող պատասխանատվությունից խուսափելու նպատակով կապ է հաստատել խուզարկության վայրում գտնվող որդու հետ, վերջինիս հրահանգել է մեկ այլ անձի փոխանցել, որ ներկայանա խուզարկության վայր և «ամեն ինչ իր վրա վերցնի»: Դրանից 30 րոպե անց տվյալ անձը ներկայացել էր խուզարկության վայր և հայտնել, որ պահվող ողջ ռազմամթերքը պատկանում է միայն իրեն: Բացի հանցագործության կատարման հիմնավոր կասկածից՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու հիմք էր նշվել պատգամավորի արարքների հանրային վտանգավորության բարձր աստիճանը՝ պայմանավորված ռազմամթերքի ապօրինի շրջանառությանը բազմաթիվ անձանց ներգրավվածությամբ, ռազմամթերքի քանակով և այլ գործոններով:

Հունիսի 19-ին հրավիրված ԱԺ արտահերթ նիստում ԱԺ պատգամավոր Մանվել Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուն համաձայնություն տալու վերաբերյալ միջնորդությունների քննարկումը տևել է հազիվ 2 ժամ: Քննարկումը փաստել է, որ նիստը հրավիրվել է ԱԺ քաղաքական բոլոր ուժերի կողմից միջնորդություններին համաձայնություն տալու կանխորոշված քաղաքական դիրքորոշմամբ: Մանվել Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու միջնորդությանը խորհրդարանը փակ, գաղտնի քվեարկությամբ հավանություն է տվել 81 կողմ, 3 դեմ, իսկ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուն՝ 77 կողմ, 3 դեմ ձայների հարաբերակցությամբ:

Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու նախաձեռնությունն ի հայտ է բերել ընթացակարգերի ապահովման իրավական կարգավորման խնդիր, որը տեսանելի չի եղել կամ հաշվի չի առնվել ԱԺ նոր կանոնակարգ սահմանադրական օրենքի մշակման և ընդունման ժամանակ:

ԱԺ կանոնակարգի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին գլխավոր դատախազի միջնորդագիրը քննարկվում է ԱԺ «առաջիկա հերթական նիստերում»:

Մանվել Գրիգորյանի ձերբակալման և դրան հաջորդող մի քանի օրերի ընթացքում ԱԺ հերթական նիստեր նախատեսված չեն եղել: Մինչդեռ Սահմանադրությամբ անձը ձերբակալվածի կարգավիճակում կարող է լինել առավելագույնը 72 ժամ, որի ընթացքում պետք է որոշվի նրան մեղադրանք առաջադրելու և խափանման միջոց ընտրելու կամ ազատ արձակելու հարցը: Այս իրավանորմի բառացի մեկնաբանությունից հետևում է, որ եթե այդ ընթացքը չի համընկնում ԱԺ հերթական նիստերին, ապա իրավապահ համակարգը չի կարող իրականացնել անձի, տվյալ դեպքում՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու սահմանադրական գործառույթը:

Օրենսդրական խոչընդոտը հաղթահարելու համար հունիսի 18-ին գլխավոր դատախազը դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որպեսզի կառավարությունը, օգտագործելով իր սահմանադրական լիազորությունը, միջնորդությունները խորհրդարանում քննարկման ներկայացնելու նպատակով հանդես գա ԱԺ արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ: Չնայած այս կերպ լուծում է տրվել ինդիհն, սակայն ակնհայտ է դարձել, որ ԱԺ կանոնակարգ օրենքի նման սահմանափակումը պարունակում է պետության իրավական անվտանգության և սահմանադրականության ռիսկեր, և առկա է իրավական այս հակասությունը վերացնելուն միտված օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

Նստաշրջանի ընթացքում կառավարության և ԱԺ պատգամավորների կողմից նման նախաձեռնություն չի ցուցաբերվել:



ԵՐԵՎԱՆ 2018